

**Կենսաբանություն, I ՓՈԻԼ  
տևողությունը 60 րոպե  
11-12-րդ դասարաններ**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

**1. Որ<sup>՞</sup> բույսի սերմերն են առավել շատ սպիտակուց պարունակում**

- 1) ցորենի
- 2) լոբու
- 3) արևածաղկի
- 4) ընկուզենու

**2. Փայտացողուն բույսի ցողունում ֆոտոսինթեզի արգասիքների ուղղաձիգ հոսքը տեղի է ունենում.**

- 1) լուբի մաղանման խողովակներով
- 2) լուբային թելիկներով
- 3) տրախեիդներով
- 4) ծուծային ճառագայթներով

**3.Բակտերիաների մեզոստմները կատարում են**

- 1) մեմբրանային օրգանոիդների գործառույթ
- 2) սպորառաջացման գործառույթ
- 3) սպիտակուցի կենսասինթեզի գործառույթ
- 4) շարժողական օրգանոիդների գործառույթ

**4.Մարդու գլխուղեղում կարող են մակաբուծվել.**

- 1) լյարդի ծծանի թրթուրները
- 2) Էխինոկոկի հասուն ձևերը
- 3) եզան երիզորդի ֆինանները
- 4) Էխինոկոկի ֆինանները

**5.Երկկենցաղների շնչառական համակարգին բնորոշ է.**

- 1) ավլեոլային թոքեր
- 2) սպունգանման թոքեր
- 3) կրծքավանդակի մասնակցությունը շնչառական պրոցեսին
- 4) բերանակլանային խոռոչի մասնակցությունը շնչառության պրոցեսին

**6.Չափահաս առողջ մարդը չի ունենում.**

- 1) բնածին և բնական ձեռքբերովի ակտիվ իմունիտետ
- 2) բնական ձեռքբերովի պասիվ և արհեստական պասիվ իմունիտետ
- 3) բնածին և բնական ձեռքբերովի ակտիվ իմունիտետ
- 4) բնածին և արհեստական պասիվ

**7. Ի՞նչ գործառույթներ ունի նյարդային հյուսվածքը .**

- 1) պաշտպանական և ռեցեպտորային
- 2) սնուցող և շարժողական
- 3) հաղորդող և ընկալչական
- 4) շարժողական և պաշտպանական

**8.Շրջուկրի գործառույթներն են**

- 1) ոսկրի աճը երկարությամբ
- 2) ոսկրի սնուցումը և աճը երկարությամբ
- 3) ոսկրի աճը հաստությամբ
- 4) հանքային աղերի փոխանակությունը և որկրի աճը երկարությամբ

**9. Ֆոտոսինթեզի մթնային փուլը տեղի է ունենում.**

- 1) ստրոմայում
- 2) նիստերում
- 3) թիլակոիդներում
- 4) գրաններում

### 10. Ինտերֆազային կորիզը պարունակում է.

- 1) միտոքոնդրիումներ և պլաստիդներ
- 2) պլազմալեմա և կարիոլեմա
- 3) ցենտրոսոմա և քրոմատին
- 4) կորիզակներ, քրոմատին և կարիոպլազմա

### 11. ԴՆԹ-ի կրկնակի շղթայի նուկլեոտիդների կոմպլեմենտար գույգերը կապվում են իրար հետ

- 1) կովալենտային, ֆոսֆոդիեթերային կապերով
- 2) ջրածնային կապերով
- 3) դիսուլֆիդային կապերով
- 4) պեպտիդային և էլեկտրաստատիկ կապերով

### 12. Մեզոդերմի ածանցյալ են.

- 1) Վերնամաշկը և բուն մաշկը
- 2) Նյարդային համակարգը և զգայարանները
- 3) Կմախքը և կմախքային մկանները
- 4) Արյունատար և շնչառական համակարգերը

### 13. Էպիստազ են անվանում ոչալելային գեների փոխազդեցությունը, որի ժամանակ.

- 1) Մեկ ալելային գույգի գենը ճնշում է մյուս ալելային գույգի գենին
- 2) Մեկ գենը պատասխանատու է մի քանի հատկանիշների ի հայտ գալու համար
- 3) Տարբեր ալելային գույգերի գեները չեն ազդում իրար վրա:
- 4) Մի քանի գեներ ազդում են մեկ հատկանիշի արտահայտման մակարդակի վրա:

### 14. Գենետիկական կոդը.

- 1) Բջջային գեների ամբողջությունն է
- 2) Գեների նուկլեոտիդային հաջորդականությունն է
- 3) Գենետիկական էքսպրեսիան է
- 4) Ժառանգական ինֆորմացիայի գրանցման համակարգ է

### 15. Ո՞ր դասի իմունոգլոբուլինների կոնցենտրացիան է ամենամեծը արյան պլազմայում

- 1) IgA
- 2) IgD
- 3) IgG
- 4) IgM

### Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Քանի՞ տիպի գամետ կարող է առաջացնել aaBB գենոտիպով գետնամորու բույսը:

17. Aa x Aa խաչասերման արդյունքում ստացած սերնդի քանի՞ տոկոսն է հետերոզիգոտ:

18. Քանի՞ տիպի գենոտիպ կարելի է սպասել սերնդում եթե խաչասերել երկարացած և գծավոր (ռեցեսիվ հատկանիշներ) պտուղներով երկու հոմոզիգոտ բույսեր :

19. Քանի՞ տիպի գենոտիպ կարելի է սպասել սերնդում եթե խաչասերել սև սերմնամաշկով և դեղին ունդերով (դոմինանտ հատկանիշներ) լոբու AABb գենոտիպով բույսը սպիտակ սերմնամաշկով և կանաչ ունդերով բույսի հետ:

20. Մարդու մոտ քրոմոզոմների բացակայությունը պայմանավորված է X քրոմոսոմում գտնվող սեռի հետ շղթայակցված ռեցեսիվ գենով: Ընտանիքում հայրն և որդին ունեն այդ հատկանիշը, բայց մայրն առողջ է: Քանի՞ տոկոս է դստեր մոտ այդ հատկանիշի ի հայտ գալու հավանականությունը: